տուկ հավաստիություն»[25]: Այսինքն՝ դա նպաստում է նաև պատմիչի իրական կերպարի բացահայտմանը:

Դավրիժեցին առաջին հերթին մտահոգվում է այն մասին, որ ընթերցողը հավաստի ու հավելյալ տեղեկություններ իմանա իր պատմագիրքն ընթերցելիս, և այդ խնդրի շուրջ է առավել հաճախակի կիսվում նրա հետ. «Եւ դու այսու երկու բանիւս՝ զորս վասն օրինակի գրեցի քեզ՝ զամենայն կիրս վտանգիցն ի միտ ածեալ գիտասցես՝ զոր կրեն քրիստոնեայքն ի յօձաբարոյ ազգէն Պարսից» (էջ 96), «որոյ քաջութիւնն յառաջիկայդ ի բազում տեղիս լինի յիշեալ, յորոց զհաւաստիս իմանաս» (էջ 120) և այլն: Հատկանշական է, որ ընթերցողի հետ զրույցում Դավրիժեցին նրան չի պարտադրում անպայման կարդալ հավաստիության լրացուցիչ պատճառաբանություններն ու տեղեկությունները. «Եւ դու զամենայն որպիսութիւն այսմ պատմութեանս, ***եթէ կամիցիս՝*** ի նոցին Իլովացւոց ճառէն ուսցիս, որ յառաջիկայդ կարգեալ եմ» (էջ 274–275): Եվ ընդհանրապես, Դավրիժեցին ընթերցողին հաճախ է ընձեռում ընտրություն կատարելու հնարավորություն. «...դու ընկալ որոյ և հաւանիս, և կամ թէ զոր ինչ տեսութիւն մտաց քոց յերկուցս պատմութեանցս արտաբերիցէ» (էջ 197):

Պատմիչն ընթերցողի հետ զրույցում փորձում է պատճառաբանել ու բացատրել իր երկարաբանությունները՝ «և երկարութեան ոճոյն մի՛ ինչ լիցիս մեղադիր և մի՛ առաջին շինողին, զի ոճ պատմութեան այնպէս պահանջէ» (էջ 331), երբեմն մղում նրան որոշակի, այս դեպքում մտավոր, ինչու՞ չէ, նաև՝ ստեղծագործական գործունեության. «Զայսքան չարչարանս, զորս յանուանէ յիշեցաք երևելիք և յայտնիք էին, զորս ի շարադրութիւնս բանի բերեալ գրեցաք. իսկ որք փոքրագոյնք էին, զորս մեք թողաք, ***դու զայն մտովք քովք իմասցիս***» (էջ 385):

---

[25] ***Աշոտ Սարգսյան,*** Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, էջ 54: